ՎԱՀԵ ՍԱՐԳԻՍԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 19.01.1988
Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Եղեգնաձոր

Պատմական գիտությունների թեկնածու **Վահե Սարգիսի Սարգսյանը** Վայք քաղաքում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ **2005** թվականին, ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ, որն ավարտել է **2009** թվականին։

2009–2011 թվականներին ծառայել է ՀՀ ԶՈՒ-ում։

2011-2013 թվականներին եղել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (ԳԿՄԿ) «Պատմության, քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոն»-ի մագիստրանտ։

2016-2026 թվականներին եղել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հայցորդ։

2026 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Վանի թագավորության պատմության հիմնահարցերը Կ. Ֆ. Լեման-Հաուպտի աշխատություններում (Ք.ա. XIII-VI դդ.)» թեմայով (գիտական ղեկավար՝ պ.գ.թ. Ռ. Ա. Ցականյան)։

2014 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում՝ Հին դարերի պատմության բաժնում՝ սկզբում որպես ավագ լաբորանտ, այնուհետև՝ կրտսեր գիտաշխատող։

2019 թվականին համատեղությամբ աշխատել է թիվ 122 ավագ դպրուցում։

2019-2021 թվականներին համատեղությամբ աշխատել է «Էրեբունի» ՊՀԱԹ-ի Կարմիր բլուր մասնաճյուղի վարիչ։

2021-2024 թվականներին՝ «Էրեբունի» ՊՀԱԹ-ի փոխտնօրեն։

2020-2022 թթ. եղել է «Հայոց պատմության հարցեր» հանդեսի պատասխանատու քարտուղարը։

Գիտական հետաքրքրությունները ներառում են Հին Արևելքի պատմության և մշակույթի, պատմական աշխարհագրության, պատմագրության հիմնահարցերը։